ԿԱՆԱՆՑ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄՈԳՐԱՖԻԱ



WIGMORE
WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart

ԻՆՉՊԵ՞Ս ՎԱՂ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԿՐԾՔԱԳԵՂԶԻ ՔԱՂՑԿԵՂԸ

Կրծքագեղձի քաղցկեղը կանանց մոտ չարորակ նորագոյացությունների խմբում զբաղեցնում է առաջին տեղը: Սակայն կրծքագեղձի քաղցկեղը դատավճիռ չէ, այն ընդամենը ախտորոշում է, մասնավորապես եթե վաղ փուլում է հայտնաբերվում: Կրծքագեղձի քաղցկեղն ունի հիվանդության նախակլինիկական շրջան և, վաղ փուլերում հայտնաբերման պարագայում, բուժումը շատ արդյունավետ է:

Ռիսկի գործոններն են՝

- ժառանգական նախատրամադրվածությունը
- վաղաժամ կամ ուշացած դաշտանադադարը
- կրծքով չկերակրելը
- ճարպակալումը
- ֆիզիկական ակտիվության սահմանափակումը
- ծխախոտի և ալկոհոլի չարաշահումը

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՁՆՆՈՒՄՆԵՐ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

Կանխարգելիչ հետազոտությունների նպատակը կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերումը և բուժումն է:

- Կարևոր է յուրացնել կրծքագեղձի ինքնազննման հմտությունը: Ինքնազննումը կատարվում է ամիսը մեկ անգամ և կարող է օգնել հայտնաբերել հիվանդության ամենավաղ դրսևորումները:



- 25 տարեկանից սկսած խորհուրդ է տրվում պարբերաբար իրականացնել կրծքագեղձերի սոնոգրաֆիկ հետազոտություն:
- 30 տարեկանում, մասնագետի հետ խորհրդակցելով, կարելի է գնահատել քաղցկեղի առաջացման ռիսկը: Ի դեպ, կրծքագեղձի քաղցկեղի դեպքերի 85% պայմանավորված չէ ժառանգականությամբ:
- 40 տարեկանից սկսած քաղցկեղի վաղ հայտնաբերման ամենաարդյունավետ եղանակը տարին մեկ անգամ մամոգրաֆիկ հետազոտություն իրականացնելն է: Այս կանխարգելիչ հետազոտության շնորհիվ կրծքագեղձի քաղցկեղով պայմանավորված մահացության ցուցանիշը կարող է իջնել 40%-ով:

Ի՞ՆՉ Է ՄԱՄՈԳՐԱՖԻԱՆ

Մամոգրաֆիան կրծքագեղձի հետազոտումն է ռենտգենյան ճառագայթների օգնությամբ: Այն կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերման ոսկե ստանդարտն է:

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»-ում տեղադրված է նոր սերնդի մամոգրաֆիկ սարք:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՄԱՄՈԳՐԱՖԻԿ ՍԱՐՔԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ճառագայթման նվազագույն ինդեքս
- Բարձրորակ և գերճշգրիտ պատկերներ՝ եռաչափ շերտավոր նկարի շնորհիվ
- Հետազոտությունը գրեթե անցավ է. կրծքագեղձն ավելի քիչ է սեղմվում
- Հետազոտությունն արագ է, տևում է ընդամենը 5-10 րոպե
- Պատասխանը տրվում է նույն օրը, 10 րոպեի ընթացքում

Կասկածելի գոյացություն հայտնաբերելու դեպքում մեր մասնագետներն անմիջապես խորհրդատվություն են տրամադրում և միջամտությունների պլան առաջարկում:

ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՄԱՄՈԳՐԱՖԻԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

- Ցանկալի է մամոգրաֆիա անցնել դաշտանից մեկ շաբաթ անց, երբ կրծքագեղձերը այտուցված և գերզգայուն չեն:
- Խորհուրդ է տրվում կրել երկու կտորից բաղկացած հագուստ, այդպես հարմար կլինի կրծքագեղձը մերկացնել:
- Ցանկալի չէ մամոգրաֆիայից առաջ հակաքրտինքային միջոցներ, օծանելիք և/կամ այլ խնամքի յուղեր օգտագործել. դրանք կարող են խաթարել մամոգրաֆիկ պատկերի հստակությունը:

Ո՞Ր ԱԽՏԱՆԻՇՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ Է ՊԵՏՔ ԱՆՀԱՊԱՂ ԴԻՄԵԼ ՄԱՍՆԱԳԵՏԻ

Ստորև ներկայացված նշանների դեպքում կինը պետք է անհապաղ դիմի մասնագետի՝ չսպասելով կանխարգելիչ հետազոտության համար նախանշված ժամկետին: Դրանք են՝

- շոշափվող գոյացություն կրծքագեղձում,
- մաշկի ներքաշվածություն,
- դաշտանային ցիկլով չպայմանավորված ցավ մի կրծքագեղձում,
- կրծքագեղձի մաշկի կարմրություն,
- պտուկից արյունային արտադրություն,
- պտուկի ներքաշվածություն կամ վերքային մակերեսի առաջացում,
- կրծքագեղձի մաշկի փոփոխություն՝ նմանվող լիմոնի կեղևի:

ԿՐԾՔԱԳԵՂԶԻ ՔԱՂՑԿԵՂԸ ԴԱՏԱՎՃԻՌ ՉԷ, ԱՅՆ ԸՆԴԱՄԵՆԸ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ Է:

ՎԱՂ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ ԿՅԱՆՔԵՐ Է ՓՐԿՈՒՄ:

ԵՂԵՔ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ, ԱՆՑԵՔ ՁԵՐ ՏԱՐԵԿԱՆ ՁՆՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՂԵՔ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԿՐԾՔԱԳԵՂԶԻ ՔԱՂՑԿԵՂԻՑ:

WIGMORE
WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart